ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

II

Պանդխտութեան խնդրին նուիրած մեր առաջին յօդուածում [1]) մենք աշխատեցինք խնդրի բնաւորութիւնը պարզել, հաստատելով հետևեալ կէտերը.

1. Պանդխտութիւնը պէտք է բաժանել գաղթականութեան խնդրից, մինչդեռ այդ երկու գաղափարները իրար հետ շփոթում էին մեր գրականութեան և հրապարակախօսութեան մէջ։

2. Պանդխտութիւնը հետևանք է սոցիալական ազատութեան, որ ամեն դասակարգ և ամեն երկրում մարդիկ չեն վայելել։

3. Իրաւունքի ազատութեան հետ կապուած լինելով, պանդխտութիւնը սոցիալական և տնտեսական հանգամանքների ծնունդ է։

4. Պանդուխտների մէջ մենք որոշեցինք ներսի և դրսի պանդուխտներ։ Այժմ կ'աւելցնենք, որ դրսի պանդխտութիւնը նշան է, որ հայրենի երկիրը բաւականաչափ աշխատանք չի տալիս, մինչդեռ ներսի պանդխտութիւնը ցոյց է տալիս, որ հայրենի գիւղը աշխատանք չի տալիս։

5. Մենք որոշեցինք, Կովկասեան հայերի մէջ, չորս կարգ պանդխտական կեանք վարողներ, և որոնցից առաջին երեք կարգի համար (ուսանողների, արհեստաւորների և վաճառականների) պանդխտական խնդիր չի ծագում այն պատճառով, որ նոցա գործը, գործելու միջոցը և դրութեան վիճակը որոշ են, մինչդեռ, ասացինք մենք, գիւղական-երկրագործ դասակարգի համար խնդիր կայ այն պատճառով, որ պանդխտութիւնը այդ շրջանում համարում է ար-

---

[1]) Տես «Մուրճ», 1889 թ., № 11։

դիւնք գիւղական-տնտեսական պայմանների վատութեան և երկրորդ այն պատճառով, որ գիւղացի-երկրագործը պանդխտութեան մէջ չի շարունակում իւր արհեստը, այլ դեգերում է անորոշութեան մէջ, հայթհայթելով իւր ապրուստը պատահական, անհաստատ և քիչ վարձատարող գործերով։ Մենք նկատեցինք նաև, որ գիւղական պանդուխտը կապուած է մնում իւր գիւղի հետ, նա պէտք է վերադառնայ և որ պանդխտութիւնը մեզանում տնով-տեղով չի լինում, այլ անհատներով և այն՝ գրեթէ բացառապէս տղամարդկանց կողմից։

Ահա կարճ բովանդակութիւնը մեր առաջին յօդուածի պանդխտութեան խնդրի մասին, յօդուածի, որը ինքը մի անալիզ է պանդխտութեան խնդրի։ Անալիզով է սկսւում ամեն մի խնդրի ուսումնասիրութիւն. և իզուր չէր, որ մենք նոյն յօդուածում յայտնեցինք հետևեալը՝ մեր հոգսը առայժմ այն է, որ պանդխտութեան խնդրի ուսումնասիրութեան համար հող պատրաստենք։ Իսկ հող պատրաստել չէ ուսումնասիրութեան համար, երբ մամուլը կը գոհանայ միմիայն ողբալով գոյութիւն ունեցող երևոյթի մասին, առանց տարբալուծելու երևոյթը և առանց քննադատութեան համար նոր հորիզոններ բացելու, որոշելով խնդրի դիրքը տնտեսական և սոցիալական կեանքի պայմանների ընդհանրութեան մէջ։

Եւ ահա թէ ինչու մեր առաջին յօդուածը այդ առիթով վերջացրինք այս խօսքերով՝ «այն տեսակէտը, թէ գիւղացին պանդխտութեան է դիմում, որովհետև տգէտ և չիմար է, մենք համարում ենք միակողմանի, այդ դատողութիւնը՝ սահմանափակ, դորանից դուրս բերող եզրակացութիւնը՝ վաղաժամ, հետևանքը ապարդիւն, մտքի, դիտողութեան և հետազօտութեան հորիզոնը և ծաւալը նեղացնող, սեղմող։ Ընդարձակել այդ խնդրին վերաբերեալ տեսակէտները, որոշել այս վերջինները,—կը լինի, ասացինք մենք, պանդխտութեան խնդրին նուիրած մեր հետևեալ յօդուածի առարկան»։

Գիւղական պանդխտութիւնը Անդրկովկասում յառաջանում է գլխաւորապէս նորանից, որ հայրենի գիւղում ոյժեր աւելի են, քան գործը պահանջում է։ Այդ կարելի է և պէտք է այսպէս հասկանալ, որ հինգ բանւոր ոյժ կան մի այնպիսի ընտանիքում, որի ունեցած

տունը, հողը, այգին, խաշնը և այլն կառավարելու համար բաւական են չորս, երեք կամ երկու հոգի. տասը ոյժ կայ այնտեղ, ուր 9, 8, 7, 6 և աւելի քիչ ոյժեր բաւական են այդ ընտանիքի ամբողջ տնտեսութիւնը հոգալու համար։ Եւ երբ գիւղական համայնքը, իւր ամբողջութեամբ առած, բաւականաչափ տնտեսական ոյժերի պահանջ չ'ունի, որպէս զի մի ընտանիքի աւելորդ ոյժերը կարողանան արդիւնաւէտ գործ ճարել նոյն համայնքի սահմաններում,— այդ ոյժերը դառնում են աւելորդ ոչ միայն իրանց սեպհական ընտանիքի համար, այլ և առհասարակ ամբողջ համայնքի համար։

Այդ՝ արդէն ոչ միայն իրանց ընտանիքի, այլ համայնքի համար աւելորդ դատուած ոյժերը իրանց տարուած են տեսնում պանդխտութեան դիմելու՝ դէպի քաղաքները, ուր նոքա դառնում են արհեստաւորների և վաճառատների աշակերտներ, եթէ փոքր են, կամ մշակներ, բեռնակիրներ, բանուորներ՝ եթէ նոքա արդէն բաւականի հասակ առածներ են։

Բնական է, որ ներկայ ազգաբնակութեան պահանջների համեմատ եթէ գիւղական կեանքը և տնտեսութիւնը աւելի զարգացած լինէր,— այն մի քանի տասնեակ հաղար պանդուխտները, որոնք այսօր քաղաքներում իբր պանդուխտներ են ապրում, շահ կ'ունենային մնալ իրանց հայրենի գիւղերում. բայց մի որոշ ժամանակ դիմում են պանդխտութեան, երբ, այդ նպաստաւոր պայմանները գոյութիւն չ'ունին իրանց համայնքում։ Եւ որ գլխաւորն է, դէպի պանդխտութիւնը դրդող հիմնաւոր պատճառներից մի քանիսը այնպիսի՛ք են, որ դժուար է շուտով նոցա հեռացնել ասպարիզից։ Ցայտնի է, որ Անդրկովկասում առհասարակ սակաւահողութիւն է տիրում, մի քանի գաւառներում անգամ այդ սակաւահողութիւնը հասցրած է ծայրայեղութեան։ Ցայտնի է նաև, որ գիւղական մեծ զբաղմունքներից մէկը—այգեգործութիւնը և առհասարակ պարտիզպանութիւնն է տափարակ տեղերում։ Ցայտնի է նաև, որ մանաւանդ երկաթուղային գծից հեռու տեղերում միրգը գրեթէ վաճառականական գնահատութիւնից դուրս մի արդիւնաբերութիւն է։ Արդ, եթէ այսօր մի որ և է համայնքում հողը սակաւ է, ուրեմն այդ հողը իւր մշակութեան համար չի պահանջում գիւղում եղած բոլոր ոյժերը, իսկ միւս կողմից այգեգործութիւնը և պարտիզպանութիւնը թէ սահ-

մանափակ է և թէ քիչ արդիւնաւէտ,—մի կամ մի քանի տարում այդ պայմանները կամ անհնարին է և կամ դժուար է փոխել։

Սակաւահողութեան չարիքի դէմն կարելի է առնել կամ նոր հողեր տալով ազգաբնակութեան կամ ջրանցքներ անցկացնելով, ուր դորա մէջ կարօտութիւն է զգացւում և կամ, վերջապէս, ցայժմ մշակւող բոյսերի տեղ՝ մշակելով մի աւելի արդիւնաւէտ բոյս։ Օրինակ, որպէս այժմ տարածւում է բամբակի մշակութիւնը՝ ի հաշիւ ցորենի, գարու կամ բրնձի մշակութեան թէ Երևանեան նահանգում և թէ մի քանի ուրիշ տեղերում։ Բայց կարելի է և խելացի է արդեօք յուսալ, որ սակաւահողութեան չարիքների դէմն առնելու այդ բոլոր երեք տեսակ միջոցները մի քանի տարիներում կը զործադրւեն այն չափով, որ մեր բոլոր գիւղական համայնքները միանգամայն կարօտութիւն զգան իրանց բոլոր առձեռն եղած արական թէ իգական անձերի ոյժերի մէջ և պահանջեն նոցա ներկայութիւնը իրանց ծննդավայրերում։ Ոչ! պէտք է աշխատել ամեն միջոցներով, որ մեր գիւղական համայնքները, զարդացնելով իրանց տնտեսական կեանքը, միշտ աւելի ու աւելի մշակ ձեռքերի կարօտութիւն զգան, բայց պանդխտութեան հետ կապւած բոլոր խնդիրները կապել այդ յոյսերի հետ—այդ չը պէտք է, որովհետև նաև ապագայում, աւելի զարդացած տնտեսական պայմանների մէջն անգամ ոչ ոք չի կարող երաշխաւորել, թէ համայնքի համար աւելորդ ոյժեր չը պիտի դոյութիւն ունենան։ Ազգաբնակութիւնը աճելու ընդունակութիւն եթէ չ'ունենար, խնդիրը ինքն ըստ ինքեան կը լուծւէր. բայց որքան տնտեսական կեանքը զարդանալու ընդունակութիւնն ունի, նոյնքան և աւելի՝ ազգաբնակութիւնը աճելու ընդունակութիւնն ունի, այնպէս որ ոչ մի համայնք չի կարող ապահով կերպով յուսալ, թէ զարդացնելով իւր տնտեսական կեանքը՝ նա կարող է իւր բոլոր անդամներին ապահով և բաւարար ապրուստ տալ։ Ահա ձեզ մի համայնք 500 տուն 3000 հոգով, որոնցից 1500 աշխատաւոր բնակիչներով։ Այժմ այդ համայնքի աշխատութիւնների համար աւելորդ են 100 հոգի, որոնք և պանդխտութեան են դիմում։ Թող այդ համայնքի տնտեսականը ժամանակով այնքան զարդանայ, որ նրան հարկաւորւեն ոչ թէ 1400, այլ 2000 հոգի։ Եթէ աշխատաւոր անձերի թիւը նոյն ժամանակամիջոցում աճի մինչ 2200 հոգի, բնա-

կան է, որ այդ՝ տնտեսապէս աւելի լաւ ապագայում նոյն այդ համայնքի համար աւելորդ ոյժեր կը լինեն ոչ թէ 100, այլ դեռ 200 հոգի, որոնք կը դիմեն՝ պանդխտութեան բոլորովին այնպէս, ինչպէս այժմ դիմեցին պանդխտութեան ենթադրական 100 հոգին։ Չը պէտք է մոռանալ, որ մարդու աշխատելու ընդունակութիւնը բաւականի առաձգական է, այնպէս որ նոյն այժմեայ գիւղական ոյժերը կարող են շատ աւելի գործ կատարել, քան այժմ նոքա կատարում են, միայն թէ լինի գործ կատարելու։

Այդ բացատրութիւնից հենց այժմ բղխում է մի հետևանք, որ մենք շատ և շատ կարևոր ենք համարում նոյն այս տեղում արձանագրել։ Այդ այն է, որ ի զուր կը լիներ պանդխտութեան խնդիրը անքակտելի կերպով կապել գիւղական կեանքի զարգացման խնդրի հետ, որի հետ առաջինը ունի շփման կէտեր, բայց որից նա չ՝ունի կատարեալ կախում։ Իսկ երկրորդ՝ երկրի, մասնաւորապէս մեր գիւղական համայնքների տնտեսական կեանքի զարգացման խնդիրը շատ և շատ աւելի բարձր և աւելի կարևոր խնդիր է, որպէս զի կարելի և անգամ ցանկալի լիներ նորան կապել պանդխտութեան խնդրի հետ։ Մեզ հարկաւոր է գիւղական կեանքի զարգացումը ոչ թէ նորա համար, որ քաղաքներում դեգերող պանդուխտները իրանց հայրենիքում մնային, այլ ցանկալի է և հարկաւոր այդ զարգացումը նաև անկախ դորանից, այսինքն եթէ վերջ ի վերջոյ թէկուզ մենք երկու-երեք անգամ աւելի պանդուխտներ ունենայինք, քան այժմ ունինք։ Ահա երկու դրութիւններ, որոնցից առաջինը թող ներկայացնի այժմեայ վիճակը, միւսը՝ մօտիկ ապագան.

	Գիւղական ազգաբնակութիւն	Գիւղական աշխատանք	Պանդուխտներ
Այժմ	1.000.000 հոգի	970.000 հոգի	30.000 հ.
Ապագայում. .	1.500.000 »	1.410.000 »	90.000 հ.

Զարգացնելով տնտեսական կեանքը, մենք այսպիսով միմիայն գիւղական աշխատանքով ապահովացնում ենք 560.000 հոգու չափ աւելի քան այժմ, տալով պանդուխտներ 60.000 հոգու չափ աւելի քան այժմ պանդուխտներ ունինք։ Առանց պանդխտութիւնը, իբր երևոյթ, ոչնչացնելու, մենք ունինք 560.000 հոգի մշտակեաց և ապահով գիւղական հասարակութեան նոր անդամներ,—ահա ինչին

կարող է ծառայել տնտեսական պայմանների բարւոքումը. և ոչ թէ մենք ձգտեցինք այդ բոլոր բարւոքումները մտցնել երկի մէջ միմիայն նորա համար, որ այժմեայ ենթագրական 30.000 հոգի պանդուխտները կարողանան իրանց տանը մնալ։ Իսկ թէ ինչ գին ենք տալիս մենք ժողովրդի այդ ամանը, ուրեմն թէ ինչ գին մենք տալիս ենք այն բոլոր պայմաններին, որոնք պէտք է ապահովացնեն նոցա վիճակը, դորա մասին արդէն բաւական ընդարձակօրէն խօսել ենք մեր անցեալ «Թիւ և Ոյժ» վերնագրով յօդւածում։

Մենք կրկնում ենք՝ պանդխտութեան խնդիրը այն ձևով, ինչպէս նա ներկայանում է մեզանում՝ Անդրկովկասում, պէտք է ջոկել գիւղական տնտեսական կեանքի զարգացման խնդրից. սորա ծաւալը շատ կը փոքրանայ, եթէ նա կապւի առաջնի հետ, թէև նոքա շփման շատ կէտեր ունին։

Պանդխտութիւնը, իբր մի յոսանք հայրենի գիւղում արդիւնաւէտ գործադրութիւն չը գտնող ոյժերի՝ մի ընդհանուր երևոյթ է և ոչ միայն ներկայիս համար. այլ նա կարող է մնալ նաև ապագայի համար, որպէս նա կայ աւելի ևս մեծ չափերով Եւրոպայի տնտեսապէս ամենաղարգացած երկիրներում, ուր նահանգից նահանգ, գիւղից քաղաք, մանաւանդ դէպի գործարանական քաղաքները գիւղական աղգաբնակութեան հոսանքը տնպակաս է։ Իսկ տեղ տեղ այդ հոսանքը անցնում է անգամ տէրութեան սահմանները։

Մենք մինչ այժմ խօսեցինք այն պանդխտութեան վերայ, որը յառաջանում է գիւղական համայնքներում գործադրութիւն չը գտնող ոյժերի գոյութիւնից։ Այդ է գլխաւոր հիմքը պանդխտութեան, թէև նա միակ պատճառը չէ։

Գիւղացուն իւր գիւղից ժամանակաւորապէս դուրս վանող պատճառները նաև այն են, որ նա հանդիպում է որ և է տնտեսական դժբաղդութեան, ինչպէս՝ հունձի փչանալը, վաշխառուին ղոհւելը և այլն։ Բայց սոքա արդէն մասնաւոր դէպքեր են, և ոչ օրգանական պատճառներ պանդխտութեան, մինչդեռ ոյժերի աւելորդութիւնը պէտք է նկատւի, որպէս պանդխտութեան օրգանական պատճառը, մի պատճառ՝ որը բղխում է գործի

քչութիւնից համեմատած մի համայնքի աշխատաւոր անձերի թիւ հետ. մի յարաբերութիւն, որը յառաջանում է տնտեսական զարգացման ուրեմն քաղաքակրթութեան մի կողմից, իսկ միւս կողմից աղգաբնակութեան աճման, ուրեմն բնութեան ոյժերի անհաւասարութիւնից։ Այն պատահական պատճառներից դէպի պանդխտութիւնը դրդող գիւղացիները միմիայն ստուարացնում են պանդուխտների թիւը մի որոշ ժամանակ, բայց նոքա չեն կազմում այն յարատև պանդուխտների կօրպուսը, որոնք պանդխտութեան մէջ ընտրում են իրանց համար մի երկարատև զբաղմունք և ապագայի յոյսեր են դնում իրանց այդ պարապմունքների վերայ, թէ որպէս ապագայ արհեստաւոր (հիւսն, որմնադիր, երկաթագործ, գրաշար, մեխանիկ, խոհարար և այլն) կամ ապագայ վաճառական կամ գործակատար կամ որպէս գործարանների հմուտ բանուոր, վաճառատների ու քարւանսարաների ամենքի հաւատարմութիւնը ձեռք բերած հաստատուն բեռնակիրներ և տան պահապաններ և այլն։ Ահա՛ թէ ովքեր են կազմում պանդխտութեան մեծ կօրպուսը և ոչ թէ նոքա, որոնք որ և է անակնկալ դէպքից տառապանքի մէջն են ընկնում և դիմում ուրիշ տեղեր, կրած վնասը մի կերպ դրստելու, բայց որքան կարելի է շուտով կրկին վերադառնալու և իրանց տան ու դաշտի գործը կրկին սկսելու և շարունակելու մտքով։ Այս վերջինները, կարճ ժամանակւայ կամ պատահական պանդուխտները առհասարակ բռնում են պանդուխտ գիւղականների ընդհանրութեան մէջ ամենաստորին տեղը. հանգամանքների ոյժով նոքա ստիպւած են բաւականանալ ամենաքչով, որովհետև նոքա կարող են կատարել միմիայն այնպիսի պաշտօններ, որոնց համար չի պահանջւում ոչ մի առանձին ծանօթութիւն ղեկավար անձերի հետ և ոչ մի որ և է մասնագիտութիւն, այլ միմիայն ֆիզիքական ոյժ։ Այդպիսիների հաւակնութիւնը «մի քանի շայի» փող աշխատելու ցանկութիւնից գէնը չի անցնում՝ տէրունական հարկը կամ մի քանի պարտքեր վճարելու համար։

Այդ վերջին տեսակներին, ասում ենք մենք, չը պէտք է շփոթել պանդուխտների ստուար մեծամասնութեան հետ, որը իւր հայրենի գիւղից դուրս վիճակ է որոնում և ոչ թէ մի «քանի շայի» փողի վաստակ։ Զը պէտք է շփոթել թէ այն պատճառով, որ նոքա

ժամանակաւոր պանդուխտներ են և «թափառող» են աւելի, քան պանդուխտներ՝ բառիս բուն նշանակութեամբ, և թէ այն պատճառով չէ պէտք է շփոթել, որ շատ բան, ինչ կարելի է նկատել յարատև պանդուխտների մասին՝ բոլորովին չի վերաբերում՝ պատահական կամ կարճժամանակեայ պանդուխտներին։

Ցիշենք, վերջապէս, մի երրորդ տեսակի պանդուխտներին։ Այդ նոքա են, որոնք պանդխտութեան մէջ միանում են պանդուխտների մեծ կօրպուսի հետ, բայց որոնք դիմել են և դիմում են պանդրիտութեան ոչ թէ այն պատճառով, որ նոքա աւելորդ ոյժեր են իրանց ընտանիքում և իրանց համայնքում և ոչ էլ ստիպուած են այդ անելու որ և պատահական պատճառով, այլ պանդխտութեան են դիմում՝ գերադասելով քաղաքը գիւղից, գերադասելով քաղաքային արհեստները՝ գիւղական պարապմունքից։ Այս կարգի մարդկանց մէջ էլ կան սոորաբաժիններ. դոցանից ոմանք կամ առանձին ձգտման և ընդունակութիւնների տէր են, ձգտումներ և ընդունակութիւններ, որոնց գործադրութեան համար ներկայ գիւղական կեանքը առհասարակ շատ նեղ է թւում և կամ մոլորուածներ են, որոնք գործում են նմանողութեամբ կամ պարծենկոտութիւնից, թիւր գաղափար ունենալուց քաղաքի կեանքի մասին, որը նոցա աչքում համանիշ է հարստութիւն, լոյս, ուսում, գիտութիւն խօսքերին։ Ահա՛ իսկապէս այն պանդուխտները, որոնց հեռանալը ծանրանում է իրանց համայնքի վերայ, քանի որ նոքա ունին այնտեղ և տուն-տեղ և կարելիութիւն՝ տնտեսութիւն զարգացնելու։ Մինչդեռ իւր տանը աւելորդ ոյժ ներկայացնող, իսկ այժմ Թիֆլիս, Բաքու և այլ տեղերում աշխատողը ոչ մի կերպ չի ծանրանում համայնքի վերայ, ոչնչով չի խանգարում թէ իւր տան և թէ համայնքի տնտեսութիւնը, այլ ընդհակառակը՝ պանդխտութեան մէջ գտնում է մի պարապմունք, որից առհասարակ պէտք է զուրկ մնար իւր հայրենի գիւղում, դորա հակառակ այն վերջին տեսակի պանդուխտները միմիայն փոխանակում են գիւղի հաստատ պարապմունքը՝ քաղաքի աշխատանքի կամ դուցէ և պարապ շրջմոլիկութեան հետ։

Մեծ խնդիր է, թէ պանդուխտների մեծ կօրպուսի մէջ այդ տեսակները ինչ տեղ են բռնում, նորա որ մասն են կազմում։ Բայց

այդ մի խնդիր է, որի լուծումը, միւս հարցերի հետ միասին, պէտք է վերապահուած մնայ մասնաւոր հետազօտողներին։ Այդ՝ բուն սատ-ոիստիքական հարց է, որին մենք այսօր պատասխանել չենք կարող. բայց այն բոլորը, ինչ մենք գիտենք հայկական ընտանիքի և համայնքի կազմակերպութեան և հայ մարդու բնաւորութեան մասին, մեզ իրաւունք է տալիս պնդելու, որ լոկ ցուցամոլութիւնը մեծ տեղ չը պէտք է բռնէ դէպի պանդխտութիւնը դրդող պատճառների մէջ։ Պնդել, թէ քաղաքը մեր կովկասեան հայի համար այնքան գրաւիչ է, որ նա պատրաստ լինի թողնել իւր հայրենի գիւղում տուն, տեղ, արտն ու դաշտը, իւր հասարակական դիրքը և այլն՝ անյայտութեան աշխարհում դեգերելու համար,—պնդել այդպիսի բան մենք չենք կարող։ Արկածախնդրութիւնը մեծ տեղ չի բռնում հայ մարդու գործառնութիւնների մէջ. ընդհակառակը մենք ամենքս լսել ենք այն անհուն սիրոյ մասին, որ տածում է հայը դէպի իւր ծննդավայրը. լսել ենք և փաստերով համոզուել, որ մեր բնաւորութեան մէջ չէ՝ դատարկ տեղից հայրենի հողը թողնել։

Ահա այդ պատճառով է, որ աւայժմ, այսինքն մինչև որ հակառակ փաստերը և նոր դիտողութիւնները մեզ չը համոզեն հակառակն ընդունելու՝ առ այժմ կրկնում ենք, պանդուխտների թուի մէջ մենք պէտք է ընդունենք ոչ մեծ տեղ բռնող այնպիսիներին, որոնք արդիւնաբերող ոյժեր են իրանց հայրենի գիւղում, բայց և այնպէս արհամարում են այդ պարապմունքը՝ քաղաքում ։ աշխատելու կամ սպարդիւն կերպով ժամանակ անցկացնելու համար։

Իսկ պանդխտութեան երևոյթի մէջ իսկապէս ախտային կողմը ներկայացնում են այն պանդուխտները, որոնք այդ վերջին տեսակից են։ Անպայման պախարակելին՝ դոքա են։ Եւ աւելցնենք՝ եթէ հասարակաց կարծիք պէտք է կազմի ժողովրդի, համայնքների մէջ, այդ հասարակաց կարծիքը ամենից փրկարար ազդեցութիւն կարող է և պէտք է գործէ այդ կարգի մարդկանց վերայ, որոնց կորստաբեր ձգտումների դիմաց կարող է համայնքը դիմադրել իւր հասարակաց կարծիքի ոյժը։ Եւ եթէ մեր սպասածից աւելի էլ լինեն այդ տեսակի պանդուխտները՝ դորա դէմն առնելու միակ միջոցը մենք կրկին տեսնում ենք միմիայն հասարակաց կարծիքի ընդդիմադրող ոյժի մէջ։ Մինչդեռ, դորա հակառակը, հասարակաց կարծիքը կորց-

նում է իւր ոյժը, երբ խօսքը մի այնպիսի պանդխտականի մասին է, որը թողել է իւր հայրենի գիւղը՝ տեսնելով իւր ապարդիւնութիւնը, վարւած լինի նա այդպէս իւր ազատ կամքով թէ տան մեծի կաղդրութեամբ։

Մի կարևոր հանգամանք կայ, որը մասնաւորապէս հայական գիւղերում տուարացնում է աւելորդ ոյժերի թիւը։ Այդ այն գերն է, որ կատարում է հայ կինը գիւղական տնտեսութեան մէջ։ Ցայտնի է, որ հայ կինը տնտեսական կեանքում մեծ դեր է կատարում՝ մասնակցելով տնային և դաշտային ամեն տեսակ նոյն իսկ ծանր աշխատանքներում։ Չը լինէր կնոջ այդ մեծ աշխատակցութիւնը,—ոչ միայն մեր գիւղական արդիւնաբերութիւնը կը նւազէր զգալի կերպով, այլ և ներկայիս տղամարդկանց աշխատաւոր ոյժերը չէին բաւիլ կատարելու այն, ինչ այժմեայ նոյն իսկ դեռ քիչ զարգացած գիւղական կեանքը պահանջում է։ Չը լինէր հայ կնոջ այդ աշխատակցութիւնը, բոլոր այժմեայ պանդուխտները, եթէ վերադառնային էլ իրանց գիւղերը, այնուամենայնիւ չէին կարող լրացնել նորանով գոյացած պակասը։ Պանդուխտների աշխատաւոր ոյժերը միայն մի փոքր մասը կարող են կազմել այն աշխատաւոր ոյժերի, որ ներկայացնում են հայ գիւղացի կանայք՝ գիւղական տնտեսութեան մէջ։ Եւ դեռ այդ կանացի ոյժերը կարող են մի քանի անգամ կրկնապատկւել՝ կատարելագործութիւն մտցնելով նոցա աշխատանքների տեխնիկայի մէջ և ներմուծելով գիւղերը կանանց մատչելի նորանոր արհեստներ։

Մեր կովկասեան ազգերի ամենքի մէջ գիւղական կանանց աշխատակցութիւնը տնային և մանաւանդ դաշտային աշխատանքների մէջ հաւասար չէ. մեր դիտեցածին համեմատ, հայ կնոջ աշխատակցութիւնը աւելի մեծ է, քան թուրքերի և վրացիների մէջ։ Ահա՛ ինչու հայ կնոջ մենք յիշում ենք իբր մի առանձին գործիչ (ֆակտոր) պանդխտութեան խնդրի մէջ, պնդելով, որ նորա մեծ մասնակցութիւնը տնային և դաշտային արդիւնաբերութեան մէջ — շատ ընտանիքներում, մանաւանդ բազմանդամ ընտանիքներում աւելորդ է դարձնում մէկ կամ մի քանի տղամարդու ներկայութիւնը իրանց սահմանափակ անտեսութեան համար, դրդելով նոցա մի ուրիշ տեղ աւելի արդիւնաւէտ գործ որոնելու։

Մեծ դեր է խաղում այստեղ նաև հայի այս բնաորոշ չը գիտենք՝ յատկութիւն ասենք, թէ՝ սովորութիւնը։ Մեր խօսքը այն բանի մասին է, որ անգործութիւնը, ծոյլ մնալը իսպառ հալածւում է մեզանում։ Մէկը, որ աւելորդ է, կարող էր նաև անգործութեան անձնատուր լինել, ապրել ընտանիքի հաշուով, և կամ եթէ այդ չը կայ՝ մուրացկանութեան տալ իրան. բայց դոքա, որպէս յայտնի է, հայ ընտանեկան և համայնական կեանքի սահմանադրութեան մէջ չեն մնում։ Այդպիսի կեանքը արհամարհում է և հալածւում աշխատութեանը սովոր հայ ժողովրդի կողմից, որով և պէտք է մեկնել հայ մուրացիկ-աղքատների սակաւութիւնը թէ գիւղերում և թէ քաղաքներում։ Կան աղքատներ—և Աստուած միայն գիտէ որքան շատ են նոքա,—բայց յայտնի մուրացողների թիւը աչքի ընկնելու չափ սակաւ է մեր տեղական հայերի մէջ։

Իսկ այդ բոլորը մի-մի գործիչներ են պանդխտութեան, այսինքն տանից և համայնքից դուրս գալու երևոյթի, այլապէս՝ պանդխտութեան խնդրի մէջ, խնդիր, որը, ինչպէս տեսնում ենք, կեանքի շատ հանգամանքներն է շօշափում և տեղիք տալիս նորանոր հարցերի, որոնց հետ ծանօթութիւնը և որոնց լուծումը պիտի աշխատենք տալ աստիճանաբար։ Խնդիրը կապ ունի, որպէս պիտի տեսնենք, մեր քաղաքների ազգաբնակութեան կազմի հետ, այս մտքով որ պանդուխտների հոսանքը դէպի աշխատութեան մեծ կենտրոնները (և մեր խօսքը Անդրկովկասի մասին է) սկսեց սաստկանալ, երբ նոր գործարանական և առհասարակ արդիւնագործական և առևտրական պահանջները Կովկասի քաղաքներում չը գտան գործին կպչելու բաւականաչափ տրամադիր, էլ չենք ասում պատրաստ դասակարգեր, քաղաքացու պատի մասին կազմած կեղծ գաղափարը անհաշտելի համարելով շատ աշխատանքների հետ, որոնք «դրսի մարդու» փեշակներ պէտք է թւէին նոցա աչքում։

Մի մեծ բաղդ կարող ենք համարել այն, որ մեր կովկասեան պանդուխտների համար կան մօտիկ կենտրոններ, ինչպէս են Թիֆլիսը, Բաքուն, Բաթումը, Երևանը։ Չը լինէին մեր երկրի իրա մէջ վաճառաշահ և գործարանական այդպիսի կենտրոններ—պանդխտութիւնը մեզանում կը փոխարկւէր թէ հասարակական և թէ ազգային մեծ թշւառութեան, որովհետև այն ժամանակ նոքա ստիպւած կը

լինէին գիմել մեր երկրից հեռու կենտրոններ, որտեղից կապ պահ-
պանելը իրանց հայրենի գիւղերի և ընտանիքների հետ՝ մանաւանդ
բանւոր և արհեստաւոր մարդկանց համար կը լիներ չափազանց
դժւարացրած, գուցէ և անհնարին դարձրած։ Այդ վիճակի մէջ են
թիւրքա-հայաստանցիները, որոնց մեծ դժբաղդութիւնը, այդ նկատ-
մամբ, նորա մէջն է կայանում, որ երկրի իրա մէջ չը կան ոչ միայն
Կ. Պոլսի, այլ անգամ մեր Կովկասի մի քանի քաղաքների նման
կենտրոններ, այնպէս որ այնտեղ իւր գիւղից հեռացողը երեսը
պէտք է խաչակնքէ՝ լաւ համոզւած լինելով, որ պանդխտութիւնով
իսկապէս իւր ապագայ գաղթն է նախապատրաստում...։

Ակներև է, թէ որքան և որքան մեծ շահ ունինք ոչ միայն
գիւղական համայնքները առաջադիմած տեսնել, այլ տեսնել կենդանի
գործարանական կենտրոնների փոխարկւած այժմեայ համեմատապէս
մեռած քաղաքները, ինչպիսիք են Երևան, Ալէքսանդրոպոլ, Կարս,
Գանձակ, Նուշի և այլն և կամ նոցա մօտ եղած բայց ապագայ
խոստացող այժմ աննշան տեղերը։ Որքան մօտիկ են այն կենտրոն-
ները, ուր կարող են դիմել իրանց գիւղերում գործ չը ճարող գիւ-
ղացիները, այնքան աւելի նւազած կը լինի այն վնասը, որ կարող
է յառաջանալ իւր ընտանիքից և համայնքից հեռանալուց։ Եւ քանի
որ մենք ապացուցած ենք համարում, որ պանդխտութիւնը յառա-
ջանում է գլխաւորապէս աւելորդ համարւած ոյժերի գոյու-
թիւնից, և քանի որ ապացուցած ենք համարում, որ աւելորդ
ոյժեր կարող են լինել նաև գիւղական համայնքների աւելի զար-
գացած տնտեսական պայմաններում, ուրեմն ապագայում, և երրորդ՝
քանի որ պանդխտութեան հետևանքները վատթարանում են, որ-
քան պանդխտական կենտրոնները հայրենիքից հեռու են,—այդ բո-
լորից պարզ երևում է, թէ ինչ դիրք պէտք է բռնել պանդխտու-
թեան խնդրի դիմաց։ Պանդխութիւնը պէտք է ընդունել ոչ որպէս
մի ժամանակաւոր երևոյթ, այլ որպէս մի յարատև երևոյթ, նոյն-
քան օրգանապէս կապւած ոչ միայն մեր՝ հայերի, այլ առհասարակ
մարդկային սոցիալական կեանքի հետ։ Ժամանակով՝ չը նայած մեր
գիւղական կեանքի անգամ մեծ զարգացման, պանդխտութիւնը ոչ
միայն կարող է գոյութիւն ունենալ, այլ նա կարող է նաև աճել
մինչ այժմեայ պանդուխտների թւի մի քանի պատիկը։ Մեր մեծ

հոգալը պէտք է այն լինի, որ պանդխտութիւնը չը տարածւի մեր երկրի սահմաններից դուրս և որքան կարելի է կենտրոնանայ մեր մէջի եղած քաղաքներում։ Իսկ դորան կարելի է հասնել միմիայն զարգացնելով մեր գործարանական արդիւնաբերութիւնը։

Մեզ թերևս հարցնեն, թէ այդ բոլոր դատողութիւններից ինչ խնդիր է յառաջանում ներկայիս համար։ Այս է յառաջանում, կ'ասենք մենք, որ, պանդխտութեան երևոյթը մեզ նման ըմբռնելով, մենք ոչ թէ ապարդիւն վայոցներով կը լցնենք մեր թերթի էջերը, անզօր յորդորներ կարդալով, որ բոլոր պանդուխտները իրանց գիւղը վերադառնան, այլ կը յարուցանենք և կ'ուսումնասիրենք պանդխտական շարժումը կանոնաւորելու և պանդուխտներին խնամելու խնդիրները։ Այդ ենթադրում է ծանօթութիւն այն դերի հետ, որ կատարում է մեր պանդխտական շարժումը իբր կապող օղակ գիւղի և քաղաքի մէջ՝ թէ տնտեսական և թէ քաղաքակրթական ասպարիզում։ Այդ մասին մի այլ անգամ։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ